600.0087.22.03.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մարտի 2017 թվականի №87Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի №482Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՄԱՎՈ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2010 թվականի սեպտեմբերի 8-ի №482Ա որոշմամբ «ՄԱՎՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախակա-նությունների օգտագործման №0840 թույլտվությունը,

բ) հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 29-ի №351Ա որոշմամբ ընկերությանը պարտավորեցվել է մինչև 2016 թվականի նոյեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով հաշվարկված 440 825 (չորս հարյուր քառասուն հազար ութ հարյուր քսանհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

գ) 2017 թվականի մարտի 2-ին ընկերությունը դիմել է հանձնաժողով՝ ռադիոհաճախականությունների օգտագործման №0840 թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի

1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 8-ի «ՄԱՎՈ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №482Ա որոշումը:

2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2016 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2017 թվականի մարտի 2-ը հաշվարկված 103 958 (հարյուր երեք հազար ինը հարյուր հիսունութ) դրամ պարտքը:

3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մարտի 2-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
22 մարտի 2017թ.